

ՆԵԼԼԻ ԳԱԼՍՅԱՆ

ՀՀ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի հայցորդ

hasmikbakurgalstyan@mail.ru

**ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 20-ԸՂ ԴԱՐԻ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ամփոփում

Սույն հոդվածում քննարկվում են 20-րդ դարի հայ-ամերիկյան գրականությունը ձևավորող գրողների գոյափիլիսոփայական և ազգային ինքնության պահպանման խնդիրներին և հարցադրումներին առնչվող սկզբունքները: Ինչպես նաև քննվում են այն պատճառահետևանքային կապերն ու հանգամանքները, որոնց հիմքում էլ հենց ձևավորվեց հայ-ամերիկյան հարուստ ու բովանդակ գրականությունը: Հայ-ամերիկյան գրականության շարքերն են հարում Համաստեղը, Վահե Հայկը, Բենիամին Նուրիկյանը, Հակոբ Ասատուրյանը, Արամ Հայկազը, Անդրանիկ Անդրեասյանը, Վիլյամ Սարոյանը, Փիթեր Սուրյանը, Փիթեր Նաջարյանը, Ջեք Հաշյանը, Հակոբ Խաչիկյանը, Լևոն-Զավեն Սյուրմելյանը և այլք: Դյուրին չէր նրանց կյանքի ուղին. հայրենի բնակավայրերից արմատախիլ մնացորդացը օտար ափերում ենթարկվում էր կյանքի, բարքերի, ընկերային ազդակների, իմացական հետաքրքրությունների և աշխարհայացքի շրջափոխության, որը ավանդասեր և ազգասեր հայի մեջ ստեղծում էր նոր ընկերության և իրականության սուր բևեռումի հարկադրանք: Նրանց ազգային ինքնության պահպանման ջանքերն ու ճիգերն անգնահատելի են: Նրանք ազգային ինքնության, դիմագծի և անհատականության հիմքում դրել են ազգային ինքնագիտակցությունը, մտածողությունը, ավանդույթներն ու բարքերը, լեզուն, պատմական հիշողությունը, մշակույթն ու հոգեկան կերտվածքը: Իրենց ստեղծագործությունների միջոցով նրանք իրենց գոյափիլիսոփայական և էկզիստենցիալ գոյության հիմնահարցերն են բարձրացրել աշխարհով մեկ:

Բանալի բառեր և արտահայտություններ. գոյափիլիսոփայություն, ինքնություն, ազգային նկարագիր, էկզիստենցիա, հայրենաբաղձություն, գոյության պայքար, ազատություն, ազգային մտածելակերպ, ավանդույթ, սովորույթ, ազգային հոգեկերտվածք:

Ներածություն

«Կուզեի տեսնել աշխարհում որևէ ուժ, որ կկործանի այս ժողովրդին, անկարևոր մարդկանց այս փոքր ցեղը, որի պատմությունն ավարտված է, պատերազմները՝ կռված ու պարտված, շինությունները՝ փլուզված, գրականությունը՝ չկարդացված, երաժշտությունը՝ չսված, եւ աղոթքները՝ մնացած անպատասխան: Կործանե՛ք Հայաստանը: Տեսե՛ք՝ կստացվի՞: Տնահան արեք ուղարկեք անապատները: Թողե՛ք առանց հացուղի: Հրդեհեք տներն ու եկեղեցիները: Տեսե՛ք՝ նորից չե՞ն խնդա, երգի եւ աղոթի: Քանի որ երբ նրանցից երկու հոգի հանդիպեն աշխարհի որևէ մի վայրում, տեսե՛ք, թե ինչպես են ստեղծելու նոր Հայաստան»¹:

Վ.Սարոյան

Հայ ազգային-մշակութային կյանքը, մասնավորապես գրականությունը, ԱՄՆ-ում ձևավորվել է 20-րդ դարի 20-ական թթ.: Ամերիկյան այն երեք գաղթօջախներից էր, որտեղ կյանքի հրամայականով, շնորհիվ արևմտահայ վերապրած և սփյուռքահայ առաջին սերնդի գրողների, ստեղծվեց սփյուռքահայ գրականությունը: 20-30-ական թթ. Ամերիկյան ներգաղթած երիտասարդ գրողներ Համաստեղը, Վահե Հայկը, Բենիամին Նուրիկյանը, Հակոբ Ասատուրյանը, Արամ Հայկազը, Անդրանիկ Անդրեասյանը հիմք դրեցին կարոտի գրականության, նրանց հարեցին Հակոբ Մնձուրին (Պոլիս), Վազգեն Շուշանյանը, Շավարշ Նարդունին (Ֆրանսիա) և այլք: Օտար եզերքներում օտարներին չձուլվելու, ազգային ինքնությունը պահելու նպատակով կարոտի գրողներն իրենց ստեղծագործություններով փորձեցին արթմնի պահել երկրի հիշատակը, հետ վերադարձի հույսը՝ պատկերելով կորուսյալ հայրենիքը, հարազատներին, «անցյալ» կյանքը՝ անդարձ կորած հայրենիքը փոխարինելով հոգևոր հայրենիքով:

¹ W. Saroyan “Inhale and Exhale”, 1936, p. 87.

I should like to see any power of the world destroy this race, this small tribe of unimportant people, whose history is ended, whose wars have all been fought and lost, whose structures have crumbled, whose literature is unread, whose music is unheard, whose prayers are no longer uttered.

Go ahead, destroy this race. Destroy Armenia. See if you can do it. Send them from their homes into the desert. Let them have neither bread nor water. Burn their houses and their churches. See if they will not live again. See if they will not laugh again. See if the race will not live again when two of them meet see if they will not create a New Armenia.

Աշխարհով մեկ սփռված հայ գրողների հիմնականատակը ազգային ազատագրման ոգեղեն գաղափարն ու իրենց ինքնության պահպանման գերխնդիրն իրենց մշակույթում բարձրաձայնելն էր:

Ակներև էր, որ 1915-20ական թթ. համարվում էին բեկումնային ժամանակահատված ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայ մտավորականության համար: Դա ոչ միայն նոր և բարդ ժամանակահատված էր Եղեռնից մազապուրծ փրկված գրողների համար, այլ նաև պայքարի և մաքառման խնդիր էր հատկապես օտար հասարակություններում: Նրանք մշտական երկընտանքի առջև էին կանգնած սեփական ինքնության պահպանման կամ ձուլվելու օտար հասարակությանը: Եվ ահա այս պայմաններում էր, որ ծագեց հայամերիկյան գաղթյալ մտավորականության սերունդը²:

Մեթոդաբանությունը

Կիրառել ենք գեղարվեստական գրականության արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, համեմատական, համադրական, ինչպես նաև օգտվել ճանաչված հայ գրականագետների և տեսաբանների ուսումնասիրություններից:

30-ական թթ. սփյուռքահայ հայագիր գրականությանը զուգընթաց սկսեց զարգանալ հասարակական նոր կենսապայմաններով ու կեցությամբ պայմանավորված անգլիագիր գրականությունը: Այս գրականության առանձնահատկությունն այն էր, որ գրողներից շատերը որպես ինքնության պահպանման ջատագովներ, ներառված էին որոշակի քաղաքական ասպարեզներում՝ փորձելով ինքնաիրագործվել և ներկայացնել սեփական ազգին հուզող խնդիրներն ու հարցադրումները ոչ միայն իրենց մշակույթում, այլ նաև քաղաքական բարձր ատյաններում³: Այդ է փաստում այն հանգամանքը, որ առաջին օտարագիր հայ գրողը Խաչատուր Ոսկանյանն էր, որը՝ որպես Թուրքիայի հյուպատոս, 1834 թ. -ին Պոլսից եկել էր Նյու Յորք, ծավալել հայանպաստ գործունեություն, եղել մաքսատան պաշտոնյա, մամուլի նախագահ, «Նյու Յորք Հերալդ» պարբերականում անգլերենով տպագրել ինչպես ամերիկյան իրականությունը, այնպես էլ հայ անհատի դեգերումները, նրա միայնությունը պատկերող պատմվածքներ և

² «Anthology of Armenian Poetry», translated and edited by Diana Der Hovhannissian and Marzbed Margossian, Columbia University Press, 1978, p.54

³ New Writing from the Middle East, edited by Leo Hamalian and John Yohannan, New Armenian Library, 1978, p.26

«Սուլթանն ու իր ժողովուրդը» պատմաճանաչողական գիրքը՝ հիմք դնելով օտարագրության, որը մեծ թափով սկսեց տարածվել ու զարգանալ 20-րդ դարի 30-ական թթ. սկսած:

Ինքնության համար պայքարող գրողների ստեղծագործություններում երկու անհատի ձայներն են մարտնչում՝ մեկը հայրենաբաղձ կարոտատենչ անձի, մյուսը՝ մեկ այլ հասարակության մեջ արդեն ձուլվող էակի: Մակայն նրանց մեջ հոսում է երկու արյուն, որոնք էլ իրենց հերթին թելադրում են իրենց կանչերը. մի կողմից հայրենի ժողովրդի պայքարն ու անտեսվածությունը, մյուս կողմից էլ նրա սերը դեպի դարերի մշակություն զարգացում ապրած ամերիկայնացումը: Նման հայ գրողները սիրում են անգլերենը, սակայն ատում են ամերիկյան մշակույթը զուտ այն պատճառով, որ իրենք գիտակցում են, որ սույն մշակույթը կարող է իրենց համար արմատական կործանարար հիմք հանդիսանալ: Հաղթահարելով լեզվական բարդությունները՝ հայ գրողներից շատերը մաս կազմեցին անգլիագիր գրականության՝ իրենց ստեղծագործություններով հարստացնելով ամերիկյան մշակույթը: Նրանցից ոմանք անգլալեզու գրականությամբ հաճախ միտումնավոր արծարծում էին հայկական թեմաներ՝ իրենց առջև դնելով երկու հիմնախնդիր՝ օտար ընթերցողին ճանաչել տալ դարավոր պատմություն ունեցող եղեռնատես հայ ազգին, ազգայինից հեռացածներին ներգրավել ազգային կյանք: Նրանցից ոմանք էլ ինչ-ինչ պատճառներով հեռացան ազգային ավագանից՝ անդամագրվելով օտար գրականության: Ազգությամբ հայ գրողները՝ հայագիր թե օտարագիր, իրենց վրա էին կրում ժամանակի գրական ազդեցությունը, հետևում այն գրական ուղղություններին և դպրոցներին, որոնք արտացոլում էին ժամանակի կյանքը, ընկերային, հասարակական հարաբերությունները, ընդգծում անհատի դրաման, նրա հայացքները, նրա ունեցած դերն այդ հասարակության և առկա իրավիճակների մեջ: Միանգամայն հասկանալի էր. ելնելով կյանքի մարտահրավերներից, օտարացվածությունից՝ ամերիկահայ հայագիր և անգլիագիր գրողները առաջնությունը տալիս էին գոյափիլիսոփայությանը և «նոր գրականության» հայացքներին: «Գոյափիլիսոփայության գիսավոր թեման, – ինչպես նշում է Բ. Գալստյանը, – մարդու անհատական կեցությունն է՝ նրա կյանքի իմաստն ու ճակատագիրը: Գոյության փիլիսոփայությունն արտացոլում է իր սեփական կեցությունն իմաստավորելու մարդու պահանջը, որը մի առանձին սրությամբ իր արտահայտությունն է գտնում նրա գոյությանը սպառնացող իրավիճակներում, երբ մարդու համար իր ճակատագիրը

վերացականությունից թանձրանում է մինչև լինել-չլինելու անխուսափելի խնդիրը»⁴:

Ամերիկյան բազմազգ խառնարանում, որը Սփյուռքի մյուս գաղթօջախներից զանազանվում էր տարբեր մշակութային ավանդույթներով, սովորույթներով, պարտադրող մշակույթով, առաջ եկավ նոր ամերիկյան և ազգային-ծագումնաբանական երկվության խնդիրը: Ամերիկյան գրականության մեջ, սկսած 20-րդ դարասկզբից, իր մնայուն տեղը հաստատեց ազգային ինքնության, ազգապահպանության թեման, որն առավել կարևոր է հատկապես փոքր ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը, խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական-մշակութային, քան ժամանակակից սոցիալական մեխանիզմների վրա⁵: Քաջ գիտակցելով այլ մշակույթին ձուլվելու հետևանքները՝ ամերիկահայ գրողները ընդդիմանում էին յուրաքանչյուր ազգի հանդեպ կատարած բռնությունների դեմ: Նրանք լավագույնս հասկանում էին այն ազգերին, որոնք երբևէ եղել են գաղթյալի հոգեվիճակում՝ կորցնելով իրենց անհատականությունն ու ազգային դիմանկարը:

Ս.Հանթինգտոնի «Ուլքե՞ր ենք մենք» հարցադրումը, որի շրջանակներում հեղինակը, ուսումնասիրելով ամերիկյան ազգային ինքնությանն ուղղված մարտահրավերները, ինքնությունը դիտարկում է որպես հասարակության համախմբման ճանապարհին յուրօրինակ բանալի. «Ազգային ինքնության գիտակցումն արտաքին սպառնալիքների ազդեցությամբ կարող է աճել և անկում ապրել, իսկ այդ ինքնության էությունն ավելի քիչ է ենթակա տատանումների. այն ավելի դանդաղ է ձևավորվում...»⁶:

Ինքնությունը բազմազգ, բազմամշակույթ Միացյալ Նահանգներում դրսևորվում է ընդհանուր քաղաքական հայացքներում: Ներգաղթը հիմք հանդիսացավ ազգային ինքնության ձևավորման համար, որը միավորեց

⁴ **Գալստյան Բ.**, Էկզիստենցիալիզմը և Վ.Սարոյանի դրամատուրգիան, Ե., «Ճարտարագետ» հրատ., 2015, էջ 4:

⁵ **Դեմիրճյան Մ.**, Ազգային ինքնությունը՝ ժամանակակից արժեքային փոխակերպումների համատեքստում, «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե., 2018, Ժ (ԺԶ) տարի, հունվար-մարտ, թիվ 1 (61), էջ 91:

⁶ «Ощущение национальной идентичности, безусловно, может нарастать и ослабевать под влиянием внешней угрозы, а вот сущность этой идентичности подвержена колебаниям в значительно меньшей степени; она формируется гораздо медленнее». (Թարգմանությունը մերն է՝ Ն.Գ.) // **Хантингтон С.**, Кто мы? Вызовы американской национальной идентичности, М.: Изд-во «АСТ», 2004, с. 30.

ամերիկյան արժեքները, աշխարհայացքը և համոզմունքները: Մշակութային բազմազանությունը դարձավ ազգային ինքնության հենքը. ձուլման գործընթացում ռասայական և էթնիկ կազմավորումները պահպանեցին իրենց ինքնությունն ու ավանդույթները: ԱՄՆ-ում հաճախ ազգային ինքնությունը նույնացվում է քաղաքական հայացքների, մտածողության հետ՝ ի տարբերություն էթնիկ պատկանելության, որն ավելի սերտորեն կապված է իր ժողովրդի ավանդույթին և մշակույթին: «Հաճախ էթնիկ ինքնությունը հակասության մեջ է մտնում ազգային հետ: Ազգային ինքնությունը լիովին ճնշում է էթնիկ ինքնությանը, – գրում են Ս. Պետերսկայան և Ա. Չեպլիգինը, – ինչը հանգեցնում է անհատի ներքին կոնֆլիկտին, որը գտնվում է որոշակի էթնիկ խմբի սկզբնական պատկանելության և ամերիկյան հասարակության անդամի դիրքի միջև սահմանային վիճակում»⁷:

Ամերիկյան մշակույթը կազմված է Միացյալ Նահանգներում բնակվող այլ ազգերի մշակույթների տարրերից: «Այն, – ինչպես նշում է Վ. Շեստակովը, – տարբեր մշակութային գործընթացների բարդ սինթեզ է, որը նպաստում է տարբեր էթնիկ խմբերի վերափոխմանը ամերիկյան ազգի»⁸:

Ի տարբերություն ամերիկյան մշակույթի՝ հայ մշակույթը դարեր շարունակ պետության երկարատև բացակայության պայմաններում անգամ կատարել է պետական հանձնառություն. պահպանել է լեզուն, կարգավորել միջանձնային հարաբերությունները, կազմակերպել հանրային կյանքը, սերունդներին փոխանցել ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգային մտածելակերպը, ստեղծել ժողովրդի ֆիզիկական և հոգեբանական

⁷ «Нередко этническая идентичность вступает в противоборство с национальной. Национальная идентичность полностью подавляет этническую, что приводит к внутреннему конфликту индивида, который находится в пограничном состоянии между исходной принадлежностью к определенному этносу и положением члена американского общества». (Թարգմանությունը մերն է՝ Ն. Գ.) // **Питерская С., Чапыгин А.**, Национальная идентичность и американская мечта//Гуманитарные научные исследования. 2018. № 1[Электронный ресурс]. URL: <https://human.snauka.ru/2018/01/24792> (մուտք՝ 26.01.2022).

⁸ «Американская культура сложный синтез различных культурных процессов, способствующих превращению разных этносов в американскую нацию». (Թարգմանությունը մերն է՝ Ն. Գ.) // **Шестаков В.**, США: Псевдокультура или завтрашний день Европы? М.: Изд-во «ЛКИ», 2010, с. 115.

պաշտպանության մեխանիզմներ⁹:

Մ.Դեմիրճյանն իրավացիորեն նշում է, որ թերևս դրանով է բացատրվում հայերի գիտակցության մեջ մշակույթի՝ որպես ազգապահպան երևույթի մասին արմատավորված պատկերացումը, և պատահական չէ, որ մշակույթի պահպանումը և վերարտադրությունը համարվել է հայ ազգի պահպանման և գոյատևման երաշխիք: Մշակույթն իր հետքն է թողել հայերի ազգային հոգեբանության վրա, ազգային ինքնագիտակցության մեջ եղել է համախմբող գործոն: Աշխարհի տարբեր ծայրերում, ինչպես նկատում է փիլիսոփա Դեմիրճյանը «Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում» հոդվածում, մշակութային օջախների ստեղծումը, ամենայն հավանականությամբ, հանդես է եկել որպես մյուս ժողովուրդներից հայերի օտարումը կանխող գործոն, ինչը միանգամայն հնարավոր էր պատմական և, առհասարակ, մարդկային հրեշավոր ոճրագործության՝ ցեղասպանության և դրան հետևած ոչ պակաս սարսափելի «համաշխարհային լուրջության» հետևանքով:

«Ամենայն հավանականությամբ, ժամանակակից հայերի գիտակցության մեջ, – գրում է Ս.Լուրեն, – սփյուռքը հանդես է գալիս որպես ազգային մշակութային ինքնության այլընտրանքային օջախ, որպես ինքնանույնականացման գործոն «մայրական էթնոսի» պայմաններում»¹⁰:

Ավելին. «Մշակույթը, – գրում է Է.Հարությունյանը, – մի հավաքական «մենք» է, որի մեջ լինելը մարդու սոցիալական գոյության միակ երաշխիքն է: Այդ մշակութային «մենքը» մեր հոգու խորխորատներում թաքնված ազգային ոգու անորսալի մի ներկայություն է, որը մշտապես «խառնվում» է կյանքի մասին մեր պատկերացումներին՝ անիմանալի ինչ-ինչ հնարքով դրանց տալով «հայկականության» հատուկ գույն ու երանգ: Այդ իմաստով «հայկականությունը» այլընտրանքային իրավիճակներում ընտրություն կատարելու էթնոմշակութային էկզիստենցիալ մի գոյավիճակ է, գոյաբանական մի տարածություն, որտեղ կերտվում է մեր ազգային ճակատագիրը: Մշակութային այդ գոյավիճակից փախուստը գրեթե անհնարին է, քանի որ մենք մշտապես նրա մեջ ենք և նրա միջոցով կանք

⁹ Տե՛ս՝, **Դեմիրճյան Մ.**, Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում, «Անալիտիկոն» ամսագիր, Ստեփանակերտ, 2018, 04 (112), էջ 27-31: Էլ. հղում՝ <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.10.2020):

¹⁰ «Скорее всего, в сознании современных армян, диаспора выступает как альтернативный центр национально-культурной идентичности, как фактор самоидентификации в условиях «материнского этноса». (Թարգմանությունը մերն է՝ Ն.Գ.) // **Лурье С.**, Историческая этнология: Учебное пособие для вузов. — М.: Академический Проект: Гаудеамус, 2004, с. 506.

որպես «հայկականության» մի մասնիկ»¹¹: Մեծ է մշակույթի, հատկապես գրականության դերը հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում: Ի տարբերություն 20-րդ դարասկզբին Ամերիկայում ձևավորված ամերիկյան ազգային ինքնության՝ լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, կենցաղը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները, հոգեբանությունն ու արժանապատվությունը կազմում են հայ ազգային ինքնության ընդհանրական որակը, որը ձևավորվում է ներազգային շփումների, փոխներգործությունների և համակեցության արդյունքում, ինչը նշանակում է, որ ազգային ինքնության մեջ ամփոփված են անցյալում ձևավորված զգացմունքները, գաղափարներն ու պատմական հիշողությունը: Այս տեսակետից ազգը մի յուրահատուկ «հավաքական մարմին» է՝ իրեն բնորոշ «հավաքական ոգով ու հոգով», և ամեն մի նոր սերունդ շարունակում է իր նախորդների կերտած պատմությունը, դառնում ազգային կյանքի կազմակերպման «մշակութային գանձարանի» իրավահաջորդը, ինչը խիստ կարևոր է ազգային ինքնության շարունակականությունն ապահովելու առումով:

Սփյուռքահայ գրողներն իրենց ստեղծագործություններում, ջանալով պահպանել ազգային ինքնությունը, հաճախ անդրադառնում են պատմական հիշողությանը՝ մոռացության չտալով անցյալը. չէ՞ որ անցյալը վերապրվող ներկան է: Սփյուռքահայ գրաքննադատ Օշին Քեշիշյանը «Ամերիկահայ անգլիագիր արձակագիրներու երկերուն մեջ եղեռնի անդրադարձումը» հոդվածում ներկայացնում է ամերիկահայ անգլիագիր գրականության հիմքում ընկած հիմնահարցերը, որոնք «ընդհանուր գիծերու մեջ կը ներկայանան հետեւեալ ձեւով՝ հայոց փորձառութիւնը ցողասպանութեան ընթացքին, որբերու փորձառութիւնը Ամերիկայի մէջ, արմատախիլ եղած ըլլալու գիտակցութիւնը, ամերիկեան ընկերութեան մէջ իր տեղը որոնող հայը, ամերիկեան մշակույթին նպաստող հայը, երկրորդ եւ երրորդ սերունդներու ինքնաձանաչման փնտրտուքը»¹², որոնք էլ կազմում են օտարագիր հայ գրողների ստեղծագործական նյութի հիմնական շրջանակները: Օտարագիր գրողների մի մասը՝ Վիլյամ Սարոյան, Փիթեր

¹¹ Տե՛ս՝ **Հարությունյան Է.**, Սերունդների աշխարհ և ժամանակակիցների աշխարհ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» ամսագիր, Ե., 2019, № 2 (29), էջ 6:

¹² **Քեշիշյան Օ.**, Ամերիկահայ անգլիագիր արձակագիրներու երկերուն մէջ եղեռնի անդրադարձը, «Նոր օր» շաբաթաթերթ, Լոս Անճելես, 2005, 18 Յունիս, Շաբաթ, էջ 5:

Սուրյան, Փիթեր Նաջարյան, Ջեք Հաշյան, Հակոբ Խաչիկյան, ազգային ինքնության թեման ներկայացնում է արձակի միջոցով՝ իրական կամ մտացածին կերպարներով վեր հանելով հայ ժողովրդի ողբերգական էջերն ու նրա ազգապահպան մաքառումները: Գրողների մյուս մասը՝ Լևոն-Զավեն Սյուրմելյան, Դավիթ Խրդյան, Փիթեր Բալաքյան, Նենսի Գրիգորյան, Քերոլ Էդգարյան, ազգային ինքնության թեման լուսաբանում է հուշագրության ձևով՝ ծնողների, տատի, պապի կամ իր հիշողության միջոցով: Հուշագրությունը հնարավորություն է տալիս դեպքերն ու պատմական անցքերը ներկայացնել ճշգրտորեն կամ մոտ ճշմարտությանը, իրական անցյալը հուշագրի կողմից վերաիմաստավորվելով՝ դառնում է ներկա, վերականգնվում է օբյեկտիվ, ռեալ ժամանակահատվածը, ճշգրտորեն ներկայացվում են անցյալի փաստերը: Օտարագիր որոշ գրողներ էլ՝ Լևոն Սրապյան Հերալդ, Դայանա Տեր-Հովհաննիսյան, Հովհաննես Փիլիկյան, Հելլեն Փիլիպոսյան և այլք, ազգային ինքնության թեման պատկերելիս դիմում են քնարական ժանրին, որը, ինչ խոսք, պատմական, փաստագրական առումներով զիջում է հուշագրության և արձակի ժանրերին, այստեղ առավել գերիշխողը զգացմունքայնությունն է, գրողի սուբյեկտիվ վերաբերմունքը:

20-րդ դարի 30-40-ական թթ. ամերիկահայ անգլիագիր գրողներն իրենց ստեղծագործություններով փորձում էին վառ պահել նախնյաց հիշատակը, կորած երկրի պատկերը, ջանում էին պահպանել հայի ազգային ինքնությունն ու ոգին, օտարներին ներկայացնում էին հարուստ մշակույթ ու դարավոր պատմություն ունեցող հայ ժողովրդի ազգային մտածելակերպը, ավանդույթներն ու սովորույթները, հոգեկան կերտվածքը:

Եզրակացություն

Իր դարավոր երկրից արմատախիլ եղած, Ամերիկայում խարիսխ նետած հայերը, ովքեր պետք է հետայսու կոչվեին ամերիկահայեր, կանգնած էին երկվության առջև: Երկրորդական, եթե ոչ երրորդական կարգավիճակում հայտնվելով՝ հոգեբանորեն ճնշվում էին, հուսալքվում, դեմ առնում բազում խոչընդոտների ու դժվարությունների. նրանցից ոմանք, խուսափելով իրենց դեմ ծառացած օտարի արհամարհական վերաբերմունքից, բազում բարդություններից, նոր բարեկեցիկ կյանքի ակնկալիքով ընդունում էին ամերիկյան բարքերը, նոր մշակույթը, ոմանք էլ, հաղթահարելով իրենց առջև ծառացած կյանքի դժվարությունները, լծվում էին ազգապահպանության դժվարագույն խնդրին՝ համադրելով նոր ամերիկյանն ու ազգայինը, օտար լեզվով իրենց ստեղծագործություններով ջանում էին պահպանել հայի ազգային ինքնությունը, ավելին. օտար հանրությանը ներկայացնում էին հայ ազգի (ազգ, որի գոյության մասին շատերն անգամ տեղյակ չէին) ով լինելը, նրա մշակույթը, դարավոր

պատմությունը, ցեղապանությունը և պահանջատերը դառնում դրա դատապարտման և դա փորձում էին անել գլխավորապես պատմական հիշողության միջոցով:

Нелли Галстян

**Описание проблем экзистенциализма и сохранения национальной
идентичности в контексте армяно-американской
литературы XX века**

Заклучение

Ключевые слова и выражения: экзистенциализм, идентичность, национальный профиль, экзистенция, патриотизм, борьба за существование, свобода, национальный менталитет, традиция, обычай, национальный менталитет.

В данной статье рассматриваются принципы, связанные с проблемами и вопросами экзистенциально-философского и национального сохранения идентичности писателей, формировавших армяно-американскую литературу XX века. Также рассматриваются причинно-следственные связи и обстоятельства, на основе которых формировалась армяно-американская литература с ее богатой и содержательной литературой. Ряды армяно-американской литературы пополняют Амастех, Ваге Айк, Бенджамин Нурикан, Акоп Асатурян, Арам Айказ, Андраник Андреасян, Уильям Сароян, Питер Сурьян, Питер Наджарян, Джек Ашян, Акоп Хачикян, Левон-Завен Сурмелян, Давид Хрдян и другие. Их жизненный путь не был легким. остатки, вырванные с родных мест, подвергались изменению быта, нравов, дружеских порывов, интеллектуальных интересов и мировоззрения на чужих берегах, что создавало тягу к новому обществу и резкую поляризацию действительности у традиционных и националистически настроенных армян. Их усилия по сохранению своей национальной идентичности бесценны. В основу национального самосознания, образа и личности они кладут национальное самосознание, мышление, традиции и нравы, язык, историческую память, культуру и склад ума. Своими произведениями они подняли вопросы своего экзистенциального и философского существования во всем мире.

Nelli Galstyan

**Description of problems of existentialism and preservation of national identity in
the context of Armenian-American
literature of the 20th century**

Conclusion

Key words and expressions: existentialism, identity, national profile, existence, patriotism, struggle for existence, freedom, national mentality, tradition, custom, national mentality.

This article discusses the principles associated with the problems and issues of existential-philosophical and national preservation of the identity of the writers who formed the Armenian-American literature of the twentieth century. It also examines the cause-and-effect relationships and circumstances on the basis of which the Armenian-American literature was formed with its rich and meaningful literature. Amastegh, Vahe Hayk, Benjamin Nurikyan, Hakob Asaturyan, Aram Haykaz, Andranik Andreasyan, William Saroyan, Peter Suryan, Peter Najaryan, Jack Hashyan, Hakob Khachikyan, Levon-Zaven Surmelyan, David Khrdyan and others join the ranks of Armenian-American literature. Their life path was not easy. the remnants torn from their native places were subjected to a change in life, customs, friendly impulses, intellectual interests and worldview on foreign shores, which created a craving for a new society and a sharp polarization of reality among traditional and nationalist Armenians. Their efforts to preserve their national identity are invaluable. They put national self-consciousness, thinking, traditions and customs, language, historical memory, culture and mindset as the basis of national self-consciousness, image and personality. With their works they raised questions of their existential and philosophical existence throughout the world.

Օգտագործված գրականություն

1. **Գալստյան Բ.**, Էկզիստենցիալիզմը և Վ. Սարոյանի դրամատուրգիան, Երևան, «Ճարտարագետ» հրատ., 2015, 148 էջ:
2. **Դեմիրճյան Մ.**, Ազգային ինքնությունը ժամանակակից արժեքային փոխակերպումների համատեքստում, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2018, Ժ (ԺԶ) տարի, հունվար-մարտ, թիվ 1 (61), էջ 91-106:

3. **Դեմիրճյան Մ.**, Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում, «Անալիտիկոն» ամսագիր, Ստեփանակերտ, 2018, 04 (112), էջ 27-31:

Էլ. հղում՝ <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.10.2020):

4. **Հարությունյան Է.**, Սերունդների աշխարհ և ժամանակակիցների աշխարհ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» ամսագիր, Երևան, 2019, № 2 (29), էջ 3-15:

5. **Քեշիշեան Օ.**, Ամերիկահայ անգլիագիր արձակագիրներու երկերուն մէջ եղեռնի անդրադարձը, «Նոր օր» շաբաթաթերթ, Լոս Անճելէս, 2005, 18 Յունիս, Շաբաթ, էջ 4-5:

6. **«Anthology of Armenian Poetry»**, translated and edited by Diana Der Hovhannissian and Marzbed Margossian, Columbia University Press, 1978, p.50-59.

7. **New Writing from the Middle East**, edited by Leo Hamalian and John Yohannan, New Armenian Library, 1978, p. 19-29.

8. **Saroyan W.**, “Inhale and Exhale”, 1936, p. 86-87 .

9. **Лурье С.**, Историческая этнология: Учебное пособие для вузов. — М.: Академический Проект: Гаудеамус, 2004, . 624 с.

10. **Хантингтон С.**, Кто мы? Вызовы американской национальной идентичности, М.: Изд-во «АСТ», 2004, 543 с.

11. **Питерская С., Чапыгин А.**, Национальная идентичность и американская мечта//Гуманитарные научные исследования. 2018. № 1[Электронный ресурс]. URL: Էլ. հղում՝ <https://human.snauka.ru/2018/01/24792> (մուտք՝ 26.01.2022).

12. **Шестаков В.**, США: Псевдокультура или завтрашний день Европы? М.: Изд-во «ЛИКИ», 2010, 224 с.

Խմբագրություն է ուղարկվել 20.08.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 04.09.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.